

ՓԵՐԵՉԵՆՑԻ ԼՍՏ ԻՍԼԱՍԻ ՆԱՏԻ ԳՆԱՀԱՏԱՆՔԸ

ՀՈՒՆԳԱՐԱՆԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

(1771-1827)

Հումգարիոյ Ազգային Թանգարանի ձեռագրատունէն հանեց

Եւ ծանօթութիւններով նոյնացուց Դոմինիկոս Բորսուլի (Korbuly Domonkos)

Պուտարիէթի Հունգարական Ազգային Թանգարանի բաղմամբիւ հունգար ձեռագիրներու մէջ՝ Հայոց մասին գեղարտաբար ոչինչ կայ: Սակայն այլադան պարունակութեամբ ձեռագիրներու մէջ կըրնանք երբեմն հանդիպիլ Հայոց մասին խօսող կտորներու ալ: այսպէս թիւ 795 Quart. Hung. ձեռագրին մէջ, որուն վերնագիրն է Perecsényi Nagy László vegyes tartalmu rövidebb kézirat, I-II kötet (Փերեչենցի Լատիսլաւ Նատիի ձեռագիրները, խառն պարունակութեամբ, Ա-Բ հատոր):

Այս ձեռագրի երկրորդ հատորին 164 - 169 էջերուն վրայ կը գտնենք մեր ստորեւ բերած գեղոյցը, որուն կարեւոր արժէքներէն է՝ Հայերու յիշատակութիւնը Լեհաստանի մէջ ԺԱ. դարուն:

Ձեռագրին հեղինակ՝ Փերեչենցի Լատիսլաւ Նատի (1771-1827), Արատ նահանգի դատաւորը, ԺԺ. դարու առաջին երկու տասնեակ տարիներուն՝ հունգարացի ամենէն բեղուն գրիչներէն մէկը եղած է, ինչպէս նաեւ դասական հեղինակներու եռանդուն թարգմանիչ:

Հայոց մասին վատարած գեղոյցը, ինչպէս գրութենէն արդէն յայտնի է, գրուած էր Tudományos Gyűjtemény (Գիտական Հաւաքածոյ) տիտղոս կրող պարբերականի համար: Սակայն այդ յոգեւածը լոյս տեսած է վերոյիշեալ թերթին մէջ, ու ձեռագիրը, թերթին խմբագրին մահէն վերջ, Հունգարական Ազգային Թանգարանի Մատենադարանի ձեռագիր հաւաքածոներուն մաս կազմած է:

Տեղեկագրութիւն

Հայ - հրեայ - գնչու ազգերու մասին՝ ընդհանուր կերպով - գրեց ազնուամեծաբ Փերեչենցի Լատիսլաւ Նատի, Արատ նահանգի երդուեալ դատաւորը:

«Pari sorte nascimur, sola virtute distinguimur!»

(Նման վիճակով կը ծնանինք, միայն առաքինութեամբ կը տարբերինք):

Առաջին մաս

Հ ա յ ո յ մ ա ս ի ն

Առանց պատճառի չէ որ իմաստուն մարդիկ վերը յիշուած առածին համեմատ կը հաստատէին ըսելով՝ նոյն հաւասար վիճակով ծնած ենք, միայն համեմատութեամբ, լաւ հակումներով, այն է՝ առաքինութեամբ կը տարբերինք իրարմէ: Այսինքն՝ եթէ մարդը իր վարքի նախնիքներու մասին ուղէ խօսիլ, այնքան հեռուներ երթալով՝ որ ուղէ Պիլոսոսի, Տեւկալիոնի, կամ Ուկիկոսի, Նոյի, Զըր-հեղեղի, Դեմոգորգոնի եւ Կադմոսի ակոսներէն ու ոսկորներէն սերած նախնիքներու ծագումը փառաբանել եւ գովել, այդ ցեղաբանական ցանկով՝ միայն թողնելու - եթէ անարժան են - փոքրիկութիւնը կը մատնանէ: ինչպէս Ուկիկոս՝ Այասի եւ Ուկիսեւի վիճաբանութեան մասին իմաստուն կերպով կ'ըսէ. «Nam genus et proavos et quae facimus ipsi, vix ea nostra voco». Պարծենկոտութիւն է միայն, եւ ոչ թոռներու համար պատիւ մը՝ նախնիքներու յիշատակութիւնը:

Այնու հանդերձ ասիկա պարծենկոտութիւն է միայն անհատներու համար, ուր հարց չկայ ստացուածքի կամ շահի. քիչ մը ինքզինքը օրօրող հպարտութիւն մըն է լոկ. բայց թերութիւն մը չի ներկայացնել կենդանի ազգի մը նկատմամբ, զոր պէտք է յարգել իր հնութեան համար ալ, միշտ մտքի առջեւ ունենալով, որ ոչ թէ առանձնական մարդու մասին, այլ ամբողջ ազգի մը մասին է խօսքը: Ուստի կենդանի ազգերու մասին, որ աշխարհի մէկ մասը կը գրաւեն, պատշաճ է պատուաբեր վերադով եւ բարի յիշատակով, մանաւանդ այս լուսաւոր ու խաղաղ տարիներուն, գրել եւ արտայայտուիլ: Մանաւանդ թէ մեծագէտ կը սխալին անոնք որ անհատները կամ մեծ ցեղերու ընտանիքները ծագրելով կը նախատեն. որովհետեւ եթէ մէկը մարդկութեան սահմանէն կ'ելլէ, իր գրչէն կամ համբաւէն տարուած, Վիրգիլիոսի ըսածին համաձայն՝ «Motos praestat componere fluctus», պէտք է շիտակ ճամբու բերել եւ ոչ թէ նուազագէտներ:

Ուստի յարկապէս Գիտական Հաւաքածոյին մէջ՝ տեղ կը խնդրեմ հայ ազգին համար ալ, որոնք հունգարական երկու պետութիւններու² մէջ, մեր գիտցածին համաձայն, արդէն ԺԲ. դարու մեր թագաւոր պետերու ժամանակ՝ հպատակութիւն առած եւ բաղմացած են³:

Մեր դրացի Լեհաստանի մէջ, մեր քաջ Պելա թագաւորէն⁴ առաջ, արդէն իրենք զիրենք ճանչցուցած էին Հայերը. այդ ժամանակները՝ այսինքն 1062ին, Պողոտանովիչ անունին տակ, թագաւորներու հովանաւորութեամբ - հոս ստորեւ վաւերական մագաղաթէն օրինակուած վկայականին համաձայն - ծաղկած են. անոնց թոռներն են այժմ Դաւիթ, Ֆլորիան, Բեր-

նարդ, Դանիէլ, Գէորգ, Պողոտանովիչ ազգանունով եղբայրներ եւ երկրատէրեր, որոնք տակաւին կ'ապրին, ու կը մագլթեմ որ ապրին:

Joannes Jacobus Symonovich, Dei et Apostolicae Sedis Gratia Archiepiscopus Leopoliensis Armenorum, facultatis Theologicae in Caes. R. Leopoliensis Scientiarum Insigni Lycaeum Director. Ad requisitionem spectabilis ac generosi domini Hungariae Nobilis, equitumque in Incl: Regni Hungariae Insurrectione Magistri, Georgii de Bochdanovich, testimonium procedentiae suae parentum, et majorum suorum ab incolatii prius in terris Magni Ducatus Russiae, dein Regni Poloniae, ad praesens Regnorum Galiciae, et Lodomeriae fixo, abstinere cupientis sequens extradandum occurrit nempe: Nationem Armenam undecimo saeculo propter revolutiones in Armenia minori occasione acerrimi belli inter Saracenos et Tartaros accensi exortas, (propter quod Reges Armeni de sede sua in Cilicia cum copiosa manu Exercitus sui coetum Crugigerorum in Tartariam se recipere coacti fuerunt) a Principe Russiae Kiovien, si presso bello Polonorum in Auxilium — 1062 — in privilegio Theodori filii Demetrii Ducis, cujus originale in Archivio hujus Ecclesiae Cathedralis in authentico asservatur — invitatum fuisse — et Viginti millia Equitum Crucigerorum advenisse, feliciterque repulsis a finibus Russiae Polonis, praefactum exercitum Armenum in Jenistam Rubrae, quam Albae Russiae, sive Magno Ducatu Lithvaniae in praemium trophaerum incolatu donatum exstitisse, et primo

1. Tudományos Gyűjtemény = Գիտական Հաւաքածոյ պարբերականի մէջ 1818ին, եւ կը հրատարակէր վերաւորարար պատմական յօդուածներ:

2. Հունգար երկու պետութիւններն են Հունգարիա եւ Թրանսիլանիա:

3. Հունգարիոյ Հայոց ԺԱ - ԺԶ դարերու զաւթականութեան պատմութիւնը տակաւին բաւարար կերպով ուսումնասիրուած չէ:

4. Պելա Ա. թագաւորած է 1059-1063:

Kioviaerum Leopoli, Cameneci, ac Luceorice in Palatinatu Volhyniae domicilia sua fixisse; postmodum vero de istis Crucigeris, qui Cameneci incolatu donati fuerunt, plurimos Armenos, nominatim vero familiam Cameneciorum majoris importantiae quinque fratrum magis celebrem, et insignem Bochdanovicze; posterioribus temporibus sedes suas Stanislaopolim transtulisse, atque ex his, scilicet: de Magnificis Theodoro, et Anna Bochdanovicze, conjugibus legitimis suprafatum spect: ac Grossum Dnum Georgium de Bochdanovicz, insurrectionis Incl: R: Hungariae Equitum Magistrum, ortum suum ducere praesentibus fidem facimus, et attestamur; in quorum fidem has ei manu nostra subscriptas et sigillo majori Cancellariae nostrae Communitas dedimus Litteras Testimoniales in Residencia nostra Archiepiscopali Leopoli /seu Lemberg/ Die 21a Februarii 1809 Ao;— Joannes Archiepiscopus Leopoliensis Armeni Ritus m. p. Deodatus de Máramaros, Theol. Doct. Curiae suae Illustris et Consistorii Leopoliensis. Armenorum Notarius in Caes. Reg. Leopoli: Lycaeo Moral. et Pastor publ. ord. Professor m. p. / L. S. / contulit cum originali authentico Diplomate, Aradini, Die 9a Februarii Anno 1818. Lazarus Lazar J. Cottus Arad. V. Notarius mp. / L. S. /⁵

Չեմ իջնեք այն ընդարձակ ծովուն մէջ՝ թէ Հայերը ե՞րբ իրենց Արարատեան հըռ-չակաւոր լեռներուն մէջ, ուր Նոյի տա-

պանը հանգչած է, եւ որ աշխարհիս առաջին դրախտը կոչուած է, չորս գետերու (Փիտոն, Փասիս⁶, Գեհոն, Արաքս) երջանիկ ափերուն քով, որ այսօր Թուրք-մենիա կը կոչուի, իրենց բնիկ թագաւորներու տակ կ'ապրէին:

Հայերը առ հասարակ Թուրքմենիա, կամ Մեծ Հայաստան եւ Փոքր Հայաստան, այսինքն Արաղուլիա կը բնակէին, եւ մինչեւ 1515 տարին թագաւորներ ունէին. այդ տարին Սելիմոս (Սիւլէյման?) Թուրք կայսրը անոնց թագաւորը՝ Արաղեւոսը կամ Արաղուլոսը չարաչար մահով սպաննել տուած է — որու անունէն Փոքր Հայաստանը Արաղուլիա կը կոչուի:

Բայց արդէն այն ատենները իրենց խումբերը, գաղութները, կամ արտագաղթողները աշխարհիս ամէն կողմը ափուռած էին, այնպէս որ ամէն շատ առաջ, վերը յիշուած վաւերացումներին համաձայն, իրենք արդէն 1060ական թուականներուն Ռուսաստան եւ Լեհաստան լեցուցած էին իրենց քաջ սերունդներով:

Սակայն պէտք է հարցը մանրամասնել. եւ ինչպէս արդէն կը դրեն Գէորգ Փրայի⁷ «Historia Regum Hungariae»-ի մէջ՝ էջ 208, եւ Սեւերինի⁸ էջ 48, Անդրէաս Բ. Երուսաղեմացիի օրով, այսինքն 1218ին, երբ յաղթական հունգարացիները մինչեւ Թարոր լեռը հասած էին, յետ սարակիներու սպառնալիքներէ՝ մինչ նախանձորներու գրգռումով թագաւորը կը վերադառնար, մտաւ նաեւ Անտիոք, ուր Հայոց Լեւոն թագաւորը իր աղջկը՝ իր դստին ժառանգութեան իրաւունքով Անդրէասի որդւոյն տուաւ⁹: Այս կապին հե-

Արաղեւոս կամ Արաղուլոս անունով. արդեօք Անտաղիա բառին մէկ ուրիշ մեկնաբանութիւնն է:

7. Յիսուսեան պատմագիր մը (1723—1801), ապա կանոնիկոս, զրադած է Հունգարիոյ պատմական աղբիւրներու խուզարկութեամբ:

8. Միստիսլուի մեքենայութիւններուն պատճառով՝ Անդրէաս Բ.-ի որդին չէ կրցած ամուսնանալ Լեւոն Ա.-ի աղջկան հետ, որով չէ կրցած հունգարացին հայ դստին վրայ բարձրանալ:

տեւանքով՝ բաղձաթիւ հայեր մեր երկիրը եկան, որոնք ժամանակով աղնուականութիւն եւ երկիրներ ընդունեցան, ինչպէս նաեւ եկեղեցական եւ աշխարհական պատիւներու հասան, ինչպէս Մօրէ, Մաւրիտոս եւ Թէոդոր⁹, եւ դեռ ուրիշ եպիսկոպոսներ ալ:

Հայոց մասին յիշատակութեան արժանի է որ ոչ մէկ խառնակութիւն եւ աղմուկ հանած են Հունգարիոյ մէջ, այլ իբր պատուական հիւրեր, հունգար հայրենիքի բնիկացած հաւատարիմ զաւակներ՝ երբեք դաւաճաններու կողմը չեն բռնած, այլ միշտ իրենց հին թագաւորին՝ Ագարոսի¹⁰ օրինակին հետեւած են, որու մասին աւանդութիւնը կ'ըսէ թէ ինքն է որ մեր Փրկչէն նամակ ընդունելու արժանի եղած է — զոր կարելի է կարգաւ Վենետիկ հրատարակուած հայալեզու դրքերուն մէջ, Տիար Անտոն Պոչնեաքի քով՝ Արատի մէջ¹¹ — որով կ'ըսեմ թէ բոլոր հայերը կաթողիկէ հաւատք ունեցած են եւ տակաւին ունին մինչեւ այսօր:

Կարելի պիտի ըլլար աւելի ընդարձակ տեղեկութիւններ դրել, եթէ Գիտական Հաւաքածոյի անձուկ էջերը մեզ չկաշկանդէին: Ասիկա պարզապէս դժուար մըն է, որպէսզի իրենց աղանկիցները, ինչպէս է, հրատարակիչ եւ զիտնական Գրիգոր Լուսարարակիչ եւ զիտնական Գրիգոր Լուսարարակիչ, աւելի ընդարձակօրէն քաջ, եւ ուրիշներ, աւելի ընդարձակօրէն ծանօթացնեն մեզի իրենց հայրենակիցները: Իրենք դրեթէ բոլոր Եւրոպական երկիրներու մէջ, մանաւանդ՝ Սալուստիոսի համաձայն, Լիբէացի Հերակլիտին հետ՝ ափրիկեան երկիրներուն մէջ ալ կը բնաւ կին: Իսկ մեր քով, Թրանսիլվանիոյ մէջ աչքի դարձող հաղարներով կ'ապրին Նիւ-սարեթուպոլիս, Կեռլա, Մարոշվաչարհէ-լի, եւ ուրիշ շատ տեղեր, ուր իրենք են խառնութեանները, վաճառականները, ար-

ուեստաւորները, լուսալափոխները. Հունգարիոյ շատ մը երկիրներու վարձուորները, արջառի վաճառականները, զիւղատնտեսները, փոխադրութիւն ընողները. կան քանի մը երկրատէրեր եւ ազնուականներ ալ: Յարգանքով կը յիշեմ հոս Լադար, Քարաչոնի, Քիշ, Թէօրէօք, Իշեգուց, Պոչնեաք, Լուքաշ, Իժաք, Պոդտան, Թայիս, Զաքարիաշ, Վերդար, Դանիէլ, Քափուտայոյ, Փլաչինթար, Փեթրուպան, Քովրիք, Պալթա, Մալնաչի, Եաքապֆի, Քէօվեր, Հանքովի¹² եւ դեռ ուրիշ հարիւրաւորներ: Ասոնց պաշտպանները լատիններէն, հունգարներէն, գերմաններէն, Ֆրանսերէն, իտալներէն, լեհերէն, եւ այլ լեզուներով խօսող, գրող եւ զիտական աշխատութիւններ կատարող մարդիկ են, եւ նախընտրաբար քաղաքներու մէջ կը պահեն իրենց կիները, որոնք զեղեցիկ, բարեպաշտ, հեղ, սիրուն եւ լաւ հագուած են: Հաղուաղէպ է իրենց մէջ որ հարսնու աղջիկ մը՝ նախնիքներէն մնացած մէկ երկու ափ արեւելեան մարդարիտ, ոսկի, արծաթ կամ աղամանդ քարեր չունենայ՝ տուփերու մէջ պահուած:

Հայր ամէն տեղ ծանօթ է, եւ ամէն տեղ տեղացի է, որովհետեւ ամէնուն հետ զիտէ պատուաւոր կերպով վարուի: Յիշատակութեան արժանի է որ իրենց ծառաները ցմահ քովերին կը մնան. եւ մանաւանդ իրենց կառապաններուն վրայ մեծ վստահութիւն ունին, որոնց հետ հաղաւոր մղոններ կը ճամբորդեն տարուան ընթացքին: Շատ օգտակար է ուսէ պետութեան մէջ հայ վաճառականներու զիտութիւն ընծայելը: Չէ կարելի աննկատ թողուլ եւ այն որ ճոխութիւնն ու շուայութիւնն ալ իրենցմէ հեռու չէ՝ երբ գրեթէ նոսր կ'ընեն, նշան՝ թէ հարուստ են: Մտքերին ամէն տեսակ զիտութիւններու

9. Ասոնց կեանքն ու գործունէութիւնը դեռ ուսումնասիրուած չէ:

10. Այսինքն՝ Արդար թագաւոր:

11. Ապացոյց՝ թէ հայերը, թէ եւ իրենց ժողովրդապետութիւններէն հեռու, հունգարացի երկրատէրեր ու աղնուականներ դարձած ալ ըլ-

լան, անցեալ դարու սկիզբը տակաւին հայերէն գրքեր կը կարգային՝ եղիսարեթուպոլի վեներական Միսթարեաններու շնորհիւ:

12. Այս յիշումը բոլոր ընտանիքները ափսոսաբար տաքած էին:

5. Արատ նահանգի նոտարն է Lazarus Lazar, ծագումով հայ, որ այս վաւերացումներն օրինակը պատրաստած է:

6. Փասիս, թերեւս կ'անհրաժեշտ է փոխարին, զոր Ֆրաք (Փրաթ) կը կոչեն Թուրքերը: Նման կարգ մը ուրիշ անճշտութիւններու ալ պիտի հանդիպին մեր ընթերցողները. անճշտութիւններ՝ որոնք չենք գիտեր թէ ինչ աղբիւրէ կը ծագին: Այսպէս քիչ վաղ կը յիշատակուի 1515ին հայ թագաւոր մը Փոքր Ասիոյ մէջ,

Հանդէպ զօրաւոր, ատակ եւ ընդունակ է: Անոնց մէջ կը ճանչնամ այնպիսի գործակալներ ու փաստաբաններ՝ որոնք վերապէօցին, Հոսթին, Քելեմէնը, Կէօրէը, Քիթոնիչը¹³ իրենց մատեններուն վրայ ունին եւ կրնան չափուել անդլիացի Փեթի եւ Փոքսի հետ:

Մէկ խօսքով՝ զուարթ, հիւրասէր, աշխատասէր եւ աստուածալախ են հայերը. կեցցեն:

* * *

Հեղինակը հայերու մասին այս կարծիքը ոչ թէ իբր Հոնգարիոյ աղնուականութեան ներկայացուցիչ մը տուած է, այլ իբր ուսումնական եւ գիտնական մը, իր ժամանակի մտայնութիւնը գերազանցող մարդ մը, որ իր արժանիքներուն համաձայն կը դատէր ամէն ժողովուրդ. ասիկա շատ յայտնի է իր ձեռագրի երկրորդ մասին մէջ (թուղթ 174)՝ դրած կոչէն ալ. «Սորվէ յարգել հրեաները»:

Փերեզենցի Լատիսլաւ Նատի այսպէս կը վերջացնէ իր ձեռագիրը.

«Հայերն հարուստ կը դառնան,

Դրամական գործ ընող կ'ըլլայ հրեան,

Գնչուներն ամէն տեղ ծառայ կ'ըլլան»:

* * *

Նոյն հեղինակի դանազան համառօտ գրութիւններ պարունակող ձեռագրին մէջ Հայոց վերաբերեալ բան մըն ալ գեռ կարելի է գտնել: 1822ին, հանդանակութեան մը համար իրեն այցելած էր Փրանկիսկեաններու մեծաւորը՝ Հ. Նազար Սապոյ, որ իրեն կը պատմէր իր գլխին անցած հետաքրքրական արկածները, 1818ի տարիներէն, երբ թրքական երկիրներէն կ'անցնէր իր առաքելական պաշտօնին բերումով:

13. Ժամանակի հունգարացի նշանաւոր փաստաբաններ:

14. Սոփիայէն:

Ձեռագրին 107 թերթին վրայ կը կարդանք.

§ 7. — «Ասկից¹⁴ յոյներու մեծ քաղաքը Արխանտա Հասիա մեկնեցայ՝ իբր քարոզիչ, ուր մեծ բազմութեամբ կը բնակէին թուրք բարձրաստիճան զինուորականներ, եւ մեծ վաճառականներու շուկութեան մէջ ընկղմած՝ Եւրոպայի գեղեցկագոյն կիները կարելի էր տեսնել այնտեղ: Հոն հանդիպեցայ Հոռմէն եկած Փրանկիսկոս Փերարի Եպիսկոպոսին եւ Եարտանի Աթոռակալին, որոնք ինծի հետ մէկտեղ Ռուշթուքի Երսէնի Օղլուին վանչուեցան: Անոնց անցադիրները բժիշկի անունով հանուած էին. բայց ծերունի եպիսկոպոսը սխալելով պատասխանը՝ ինքզինքը քահանայ ներկայացուցած էր. ուստի իրենց պատասխաններու հետեւանքով իբր լրտես եւ կասկածելի անձեր՝ խափազի, այսինքն՝ բանտ դրուեցան: Իսկ ես իմ փերմանէս արդէն ծանօթ ըլլալով իրենց, թուրքերէն ալ լաւ կը խօսէի¹⁵, ազատ արձակուեցայ: Բայց ինծի մեծ մտահոգութիւն կը պատճառէր ծերունի եպիսկոպոսին ազատութիւնը, որ իր ընկերով միասին երեք օր վերջ պիտի գլխատուէր: Օ'ն, ուրեմն, 10 ոսկիով ձի մը վարձեցի եւ Սեբաստիանոս ու Մարտինոս հարուստ հայերուն վազեցի, որոնք Օղլուի լաւ բարեկամներն էին. ասոնք ամսան — այսինքն՝ ներողութիւն առին, երբ արդէն գրեթէ գլխատման վայրը կ'երթային: Ազատեցան եւ հայերու ծախքով մինչեւ Դանուբ, մեծ Ռումանիա տարուեցան»:

Հ. Նազարի արկածները յաւերժացնող այս ձեռագիրը տպուած է «Felső Magyarországi Minerva» (Բարձր Հունգարիոյ Միներվա) թերթին մէջ 1825 տարւոյն Բ. թիւին մէջ:

Հունգարեիէնէ քարգմանեց
Հ. Ա. Ֆ.

15. §. 7ին մէջ ալ կը գրէ թէ «Սոփիայի մէջ ալ թրքական հագուստներով կը պտըտէի, իբր վաճառական»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԳԵՐԸ

ԱՆԳԵՂ ԲԵՐԴ

Հայաստանի հնագոյն բերդերէն մէկն է, որ կը գտնուի Անգեղոտան գաւառին մէջ. այժմ Տիգրանակերտի կուսակալութեան «Արդանա» գաւառին մաս կը կազմէ. Հիւլաժման դայն կը դնէ «Արդանա-Սու»ի վրայ, որ փոքրիկ գետ մըն էր, նոյն գաւառին մէջէն անցնող¹:

Փ. Բիւզանդ դայն կը գետեղէր Անգեղոտան գաւառին մէջ. «Եւ դային (զօրքն պարսից) պահ արկանէին շուրջ զԱնգեղ դամուր բերդան, որ է յԱնկեղ տանն դաւառին»²:

Բերդը տակաւին կանգուն է լեռան դաւաթին վրայ, եւ ունի միակտուր քարէ բուրդեր, ներսը ջրհոր կամ գուբ, ուր կը հաւաքուէր Տիգրիսէն հասնող ջուրը, եւ ուր կարելի էր իջնել սանդուղէ մը՝ մինչեւ բերդին յատակը, եւ պաշարումի տեսն ջուր առնել անկէ, առանց տեսնուելու թշնամիէն:

Բերդին արեւելակողմը լայն ձոր մը կայ, որուն երկու կողմերը կ'երեւին վիւհայ, որուն երկու կողմերը կ'երեւին մափոր սենեակներ, որոնք կը կարծուին թէ եղած ըլլան գերեզմաններ. ձորին մէջ անկիւնը նոյնպէս կ'երեւին հին եկեղեցւոյ մը մնացորդները, սեւցած քարեր, որոնք կրնան մեհեանի մը մնացորդներն ալ ըլլալ. այս բոլորը ցոյց կու տան թէ հոս հին ատեններէ ի վեր նշանաւոր տեղ մը եղած ըլլալու է³:

Ե՞րբ շինուած է Անգեղ բերդը եւ որոնցմէ՞. զանազան են կարծիքները մեր պատմագիրներուն. ոմանք կը համարին թէ Անգեղ բերդը Ուրարտական շրջանին շինուած բերդ մըն է, ինչ որ շատ հաւանական կ'երեւի, որովհետեւ շուրջը գտնուած են բազմաթիւ ուրարտական արձանագրութիւններ, եւ Փ. Բիւզանդ կ'ըսէր. «քաղով գանձ մքերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ»⁴: Բիւզանդ՝ հին ժամանակներ ըսելով՝ ան-

շուշտ նախաքրիստոնէական ժամանակաշրջանին կ'ակնարկէ. եւ արդէն Արշակունեաց շրջանին, եւ անկէ առաջ, Անգեղ բերդը եղած է մեր թագաւորներու գերեզմանոցը, եւ գանձատունը, «զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց»⁵:

Այս դանձին տիրանալու համար էր որ Մերուստան Արծրունին հոն մտնելով՝ կողոպտեց ինչ որ գտաւ, մինչեւ անգամ թագաւորներուն գերեզմանները. «Եւ ինչպէս կ'ըսէ պատմիչը, հոն էր մեր Սանատրուկ թագաւորին գերեզմանը, որ միակտուր հսկայ գանդուած մը ըլլալով՝ չկրցաւ բանալ. «ոչ վարացին բանալ վասն անհեղեղ սկայագործ հաստաչինած ճարտարագործ արարածոցն»⁶:

Ուրեմն կարելի է հետեւցնել՝ թէ Անգեղ բերդը Գրիստոսէ շատ դարեր առաջ գոյութիւն ունեցեր է:

Սերէոս պատմիչ եւս կը յիշէ Անգեղ բերդը, երբ կը խօսի Սոսրով Բ.ի մասին, որ իշխած է 337-342ի ատենները. իսկ Բիւզանդ՝ Արշակ Բ.ի օրերուն ակնարկելով (350-357)՝ կ'ըսէ թէ Անգեղ բերդին իշխանութեան ամէնէն փայլուն շրջանը եղած է այդ: Ուրեմն կրնանք ըսել՝ թէ Անգեղ բերդը Արշակունեաց իշխանութեան ամէնէն զօրաւոր բերդերէն մէկը եղած է, եւ մեծ դեր ունեցած է անոնց քաղաքական կեանքին վրայ:

Արշակունեաց թագաւորութեան շրջանին Անգեղ բերդին իշխան կը յիշուի Դրաստամառ Ներքինին, «որ յամա Տիրանայ թա-

1. Հիւլաժման, «Հին Հայոց տեղւոյ անունները», տպ. Վիեննա (Ազգ. Մտնդ. ԾԳ.) 1907, էջ 157:
2. Փ. Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Դ, իդ, տպ. Վենետիկ, 1933, էջ 149:
3. Հ. Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան, տպ. Վենետիկ, 1903-5, էջ 79:
4. Փ. Բիւզանդ, Անդ, էջ 149-150:
5. Անդ, էջ 149:
6. Անդ, էջ 150: